

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԽԱՂ

Արմանը և Արմենը խաղում են մի հետաքրքիր խաղ, որի էությունը հետևյալն է. սեղանին դրվում է ընկույզի երկու կույտ A և B, Արմանը և Արմենը հերթականությամբ քայլեր են կատարում (առաջին քայլը կատարում է Արմանը): Յուրաքանչյուր քայլի ժամանակ խաղացողը կարող է կատարել հետևյալ գործողություններից մեկը.

- ուտել մեկ ընկույզ որևէ կույտից
- ուտել մեկական ընկույզ ամեն կույտից
- տեղափոխել ընկույզ մի կույտից մյուսը:

Խաղում հաղթում է նա, ով ուտում է վերջին ընկույզը:

Արմանը և Արմենը տիրապետում են խաղի հաղթողի ավգորիթմին: Գրել ծրագիր, որը տրված A և B թվերի համար կկանխորոշի խաղի ավարտը:

Մուտքային տվյալներ

Մուտքի տարբեր տողերում գրված է երկու բնական թիվ A և B ($1 \leq A, B \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել 1, եթե կհաղթի Արմանը, իսկ Արմենի հաղթանակի դեպքում պետք է արտածել 2:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	2 2	2
2	5 5	1